



50. ԶԵՅՐԱՆԻ ԽԵՉԱԹԸ

Ժամանակով աշխարքի չորս կողմերում է թաքավորներ են շրջում:

Արևմուտքի թաքավորն ուներ մե տղա: Էս տղեն մե օր պաղ-րաստվում ա որսի գնալու: Խերը, որ տեսնում ա՝ տղեն որսի ա էթում, զգուշացնում ա, թե հուր որ էթաս, մեր սահմանից դուս չըգաս, Արևելյան թաքավորի սահմանն էլ ոտ չըդնես: Արևելյան թաքավորը մեր թշնամին ա, չեզի մե վնաս կրխասցնա:

Տղեն գնաց սաղ օրը ման էկավ, մե խատ ճնջուղ էլ ա չըզարկեց, փոր-փռչման գալում էր տունը: Մեկ էլ տեսավ մե ջեյրան հան-չից փախավ: Ջինը քչեց, հընգավ ջեյրանի հետևից: Էնքան լարեց, չըկառցավ խասնի: Հետևից գնաց, չի հիմանում հուր էլ ա էթում: Չանքի լուս մարալին լարեց, վերչը գնաց խասավ մե քաղաք: Մա-րալը մտավ քաղաքը: Հետևից գնաց մե քուչով հընցավ, մեկէլ քու-չի վրեն մե ջոչ դարվանգա կար: Ջեյրանը գլխով դարվանգեն ուզեց բացա, չըկարցավ:

Գնաց էկավ դլոնձցավ, պատից թռավ, մտավ հայնթը: Տղեն դարվանգեն տփեց:

Մե խորոտ ախճիկ էկավ դուռը բացեց, հիչկաց տղին, առանց նեղանալու, քաղձը, խառցուց.— Ի՞նչ եք ցանկանում, երիտա-սա՛րթ:

— Օրիո՛րթ, իմ ջեյրանը մտավ ձեր բակը, տվե՛ք:

Ախճիկն ասավ.— Երիտասա՛րթ, թե ընձի չեք հավատում, էկեք ստուգե՛ք, մեր բակը ջեյրան չըկա:

Տղեն անհարմար համարեց էթա ստուգա: Էտ տեսակ ախճկա խոսկին էլ չըհավատա՞ն:

Տղեն, որ ուզեց ետ գալ, ախճիկն ասավ.— Լա՛վ ման արի, մա-րալտ էս քաղաքում կըթթնես:

Թաքավորի տղեն էս ախճկա խոսկի վրեն մնաց կասկածով, հընչի՞ աասավ, թե «քո ջեյրանը էս քաղաքում կըթթնես»:

Մտածելով գնաց, խասավ մե քարվանսարա: Ներս մտավ, խաց ճերավ, մե տեղ ուզեց քնելու: Տարան մե օթաղ տվին, տղեն

քնավ, հիրկվա յան զարթնավ, նոր խառցուց, թե՛ էս ի՞նչ քաղաք ա, ասին, որ՝ Արևելյան թաքավորի քաղաքն ա: Տղեն լիզուն կծեց. «էս հո՞ւր հրնգա»:

Դուս էկավ ման գալու, տեսավ մե օտարական էկավ: Ուառցուց, հիմացավ, որ էտ օտարականը Հարավային թաքավորի տղեն ա, էկեր ա, որ Արևելքի թաքավորի ախճիկն առնի: Էրկուսով մնացին էս քարվանսարեն: Հառավոտ Հարավային թաքավորի տղեն գնաց, նշանվավ Արևելյան թաքավորի ախճկա խետ, ետ դառցավ գնաց հիրանց երգիրը, որ խառնիսի պաղրաստութուն տենա: Ջեյրանի ման էկող տղեն մե քանի օր մնաց էս քարվանսարեն: Մե տղա էլ էկավ: Էս էլ Հյուսիսային թաքավորի տղեն էր, էթում էր Հարավային թաքավորութունը, որ էս թաքավորի ախճիկն առնի: Էրկսով ծանոթացան: Արևմտյան թաքավորի տղեն լավ երբող էր, հրմա Հյուսիսային թաքավորի տղեն դուսի տփող էր:

Էս քարվանսարի մեջը մեկը դուսի էր տփում, մեկ՝ երքում էր: Էնքան ժողովուրթ էր թնփե էտ տղերքին թամաշա, որ էլ հեսաբ չըկար: Ուաբարը գնաց խասավ թաքավորի ախճկան, թե էրկու օտարական տղա հիրանց երքով ու դուսիով սաղ քաղաքը զարմացրեր են:

Թաքավորի ախճիկը որ լաց, ասավ.— Գնամ ստուգեմ, տենամ հո էն տղեն չի՞:

Գնաց ստուգեց, տեսավ հիրա ուզած տղեն ա:

Էկավ խորն ասավ.— Հայրի՛կ, լավ երքողներին թողեր ես քարվանսարում են երքում, էս անպետք զուռնաչիքը բերեր ես պալատը:

Թաքավորը մարթ հղրկեց, ըստոնցը կանչեց:

Տղերքը էկան պալատ, լավ լավ երքեր ասին:

Թաքավորը շատ գովաց, հետո հրաման տվեց, որ էթան ախճիկների խրմար էլ երքեն:

Տղերքը գացին երքին, ախճիկների բերանը մնաց բաց: Էտքան լավ տղերք չին տեսե:

Ետո թաքավորի ախճիկը դարավաչներին ասավ.— Գացե՛ք ձեր սենյակները:

Հինքը տղին խառցուց.— Երիտասա՛րթ, ջեյրանտ քթա՞ր:

Տղեն ասավ.— Ձրքթա, օրիո՛րթ: Դուք իմ սիրտը կասկած քցիք, էն օրվանից սպասում եմ, ջեյրանս չըկա ու չըկա:

Ախճիկն ասավ.— Քո ջեյրանը ես եմ պախե, հեն ա էն օթաղն ա:

Տղեն հելավ գնաց էտ օթաղի յանը, ախճիկը մեկէլ դռնով վազավ, մտավ էտ օթաղը, ջեյրան դառցավ կայնավ: Տղեն դուռը բացեց, տեսավ ջեյրանը կայնուկ: Էկավ ախճկա օթաղը:

Ախճիկը մեկէլ դռնով ախճիկ դառցավ, վազավ, էկավ հիրա տեղը կայնավ:

Տղեն ներս գալով ասավ.—Այո՛, իմ ջեյրանն ա, չե փեշքեշ:

Աղջիկը ծծղաց ու ասավ.—Տղա՛, ջեյրանը ես եմ, ես քո հառաչն հընգա, բերի ըստե, հիմի ես չեզի փեշքեշ, թե ջեյրանը ընձի՞ փեշքեշ:

Տղեն խասավ ախճկա հերեաները պաչեց:

Հյուսիսի թաքավորի տղեն մնացեր էր չիվար կայնուկ, դուփն էլ ձեռից հընգավ, խաբար չեկավ:

Ըստե հըմմեն բան բացատրին, բացատրվան ու որոշին իմալ ախճկան տանեն:

Ախճիկ ջեյրանն ասավ.—Ամսի տասներխնզին կըզան ընձի տանիլու հարավի թաքավորի տղի խըմար: Ես չի առնում, խերս զոռով տվեց:

Որ տանելու հըլնեն, ճամբեն գերեզմանոցի կողով ա էթում:

Ընդե մե բանցր սև դամբարան կա, իմ տատի դամբարանն ա: Դուք կէթաք մտնեք էտ դամբարանը:

Գնալու ժամանակ ես մինակ կըզամ էտ դամբարանը, տատիս գերեզմանը տենալու: Էն վախտը ինչ կուզեք, արեք:

Համաձայնվան ու հրկսին էլ հղրկեց քարվանսարեն:

Ամսի տասներխնզին էկան Ջեյրանին տանելու:

Որ խրերն¹³ էկան, էս հրկու տղեն գացին մտան դամբարանը:

Նառնիսը վեռչացավ, խառսին դրին ֆայտոնը, խրերը ետ դառցան:

Որ խասան գերեզմաններին, ախճիկն ասավ.—Էն սև դամբարանը իմ տատի դամբարանն ա: Թող ոչ մեկն իմ խետ չըզա, ես էթամ տատիս քարը պաչեմ, վրեն էլ մե քիչ լւմ, ետո գամ ու էթանք:

Ֆայտոնից հիչավ, գնաց դամբարանը, տեսավ սիրածն ու հընգերը սպասում են:

Շորերը խանեց, խաքցրեց սիրածի հընգերին, թողը քցեց գլխին, ընդրա չորերն էլ հինքը խաքավ, ասավ.—Դու գնա՛, տղամարթ ես, մե հնար կըստեղծես, կըփախնես, մենք չեզի տաս օր կըսպասենք, կըզաս:

Տղեն համաձայնվավ, գնաց նստավ ֆայտոնը, ու հայդա, հարավային թաքավորութուն հո՞ւր ես, էկա:

Թո էս հրկուսը մնան ըստե, մենք խաբար տանք դհուլչուց: Դհուլչին խառսի չորերով գնաց: Տարան թաքավորի պալատը, վերի հարզը մե լավ օթաղի մեջ դրին, հիրանք զբաղվան խառնի-

13 Հյուրերը, մականները (Ծ.Ա.):

սով: Մտնե՛րը գնաց խառսին խաց տան: Մե սաղ օր խառսը անոթի մնաց: Հիրկուն միտնե՛րն հընգավ, որ խառսն անոթի յա: Խաց տա-
րան, չընթունեց:

Տղի մերը տարավ: Ետ տվեց: Վազիրը տարավ, ետ տվեց: Վեր-
չը խացը տվին թաքավորի ախճկան, ասին. «Դո՛ւ տար, կարող ա
վերցնա»:

Ախճիկը տարավ, ասավ.—Ուա՛ռս, ես թաքավորի ախճիկն եմ,
հույս ունեմ, որ ընձի ետ չես տա, բան չըկա, ուրախութունով հըն-
գանք, չեզի մոռացանք:

Ճեղճ խառսն ասավ.—Արի՛, թաքավորի՛ ախճիկ, բարով գաս:

Թաքավորի ախճկան ներս առավ, հերեսները պաչեց, նստան,
խաց ճերան, դուռը փակեց, ասավ.—Ես Հյուսիսի թաքավորի տղեն
եմ, էկեր եմ չեզի տանեմ:

Ախճիկը զարմացավ, ծանոթին ճանչցավ: Տեսավ, որ հիրա սի-
րած տղեն ա, համաձայնվավ, որ հիրար խետ փախեն:

Հառավոտ ախճկան ասավ.—Գնա էրկու ձի՛ բեր, ասա՛, էթում
ենք ման գալու, հիրկուն կըգանք: Զիանքը կըխեճնենք ու կըփախ-
նենք:

Ախճիկը գնաց մեյթարի մոտ, էրկու լավ ձի կերակրել տվեց,
տանեցիներին ասավ, որ «խարսը տխրեր ա, ուզում ա ման գա,
տանում եմ ման տալու, հիրկուն կըգանք», հինքը գնաց տղի խետ
պաղըաստութուն տեսան, որ մե սհաթից ետո փախեն: Մե ժամից
ետո ծառեքը ձիանքը բերին, ըստոնք խեճան ու գացին:

Թո ըստե արխային հիրանց խառնիսը չարունակեն, մենք տե-
նանք թաքավորի ախճիկն ու Հյուսիսի թաքավորի տղեն հուր են
էթում:

Ըստոնք գացին, մե օր, էրկու օր, չեմ ջիղում, վեռչը խասան
Արևելյան թաքավորի ջերեզմանները, մտան դամբարանը, տեսան
ըստոնք հըլն ըստե են, հիրանցն են սպասում:

Գացին էրկու ձի էլ առան, դառցան չորս ձիավոր, խեճան ձի-
անքն ու քաղաքից դուս հելան:

Գացին մե քաղաք, մե տարի մացին: Ըստե Արևմտյան թաքա-
վորի տղեն ու Արևելյան թաքավորի ախճիկը՝ Զեյրանը, մե տղա
ունեցան:

Մե տարի մնալուց ետո որոչեցին էթան հիրանց տները:

Հյուսիսի թաքավորի տղեն ասավ.—Ես ձեզի կըտանեմ ձեր
երգիրը, ետո կեթամ մեր երգիրը:

Ընդոնք շատ ուրխցան, որ կըգան իրանցը դոնախ:

Պաղըաստվան, հելան հընգան ճամբա ու գացին:

Գացին խասան մե ծովի: Տեսան՝ մոթը հընգավ: Էս ծովի կրա-
ղը մե տուն կար, գացին էտ տունը: Տեսան մե թավլա, չորս ձիան
տեղ, չորս մսուրք: Զիանքը կապին թավլեն, մտան տունը, տեսան
չորս աթոռ, չորս սաքան, չորս տալերք, չորս բաժին ճաշ ա դրուկ,
տունը մարթ չըկա:

Նստան խաց ձերան, հելան քնան:

Որ էկան քնան, Հյուսիսային թաքավորի տղեն նշանածին
ասավ.— Էս օտար տեղը, չոլի մեջը, իսանի ոտ չըկա, չորսով էլ, որ
քեննք, կարող ա մե վնաս պատահի, դու ըստե քնի՛, ես էթամ պա-
հակ կայնեմ: Ըստե մե գախտնիք կա:

Գնաց դուսը, կայնավ պահակ:

Գիշերվա ժամը մեկին տեսավ՝ երգնքից մե աստղ հիչավ, ծովից
էլ մե աստղ դուս էկավ: Էկան, Հիրար խետ խոսացին:

Երգնքի աստղը ծովի աստղին ասավ.— Քույրի՛կ, հէսօր ո՞վ են
դոնախներտ:

Ծովից դուս էկող աստղն ասավ.— Էսօրվա դոնախներս չորսն
էլ թաքավորազն են:

Երգնքից հիչնող աստղն ասավ.— Բայց ջիդում ես, որ քո դո-
նաղներին մեծ փորցանք ա սպասվում: Երնեկ թե մեկը զարթուն
հըլներ լսեր, դե լսա՛, ես չեզի ասեմ:

Ըստոնք էթում են Արևմտյան թաքավորի երգիրը:

Էս տղի խեր թաքավորը տղին ասավ, որ «Արևելյան թաքա-
վորի խողը չէթաս»: Ուերը չէր ուզում, որ տղեն էթա էն Ջեյրան
ախճկան պատահի: Ուոր միտքն էր, ինչ էլ հըլնի, ընդրան բռնա,
դառցնա հիրանը կնիկ, ըստու խըմար էլ չէր ուզում, որ տղեն էթա
էտ երգիրը: Հիմի որ տղեն Ջեյրանին տանա, խերը տենա, տղին
կուզա սպանա, որ Ջեյրանին հինքն առնի: Տղեն բանից բեխաբար
ա, կէթա ու կըհընգնի չայլազը:

— Ուերը ո՞նց բղի տղին սպանա, չէ՞ որ ժողովուրթը կըճղգոհի:

— Ուերը տղին կըսպանա իրեք ձևով:

Հանգ տղին կընստցնա մե ֆայտոն, էտ ֆայտոնն էնենց կա-
նա, որ հըմա բան կպավ, բղի պայթի: Տղեն մեամիտ ոտը կըղնա,
ֆայտոնը կըպայթի, տղեն կըմեռնի, ըստե խերն էլ մեղավոր դուս
չի գա: Ֆայտոնչուն, ձի պախողին կըսպանա, հիրա հանցանքը կը-
թաքցնա:

Եթե որ էս բանը չըհաչողվի, էն տունը, որտեղ բղի տղեն էթա,
էլի էնենց կանա, որ պայթի: Ըստու խըմար էլ սենեկապետին կըս-
պանա, հինքը էլի կարթարանա: Էս էլ որ չաչողվավ, տղին կը-
տանա էն օթաղը, որի վերեկ հարգը վիչաբ կա: Գիշեր վիչաբը կը-
գա, տղին կուտա:

—Բա ըտրա դեմ հեչ միջոց չըկա՞,—խարցուց ծովի աստղը:

—Հնար կա, հըմա հիրանք բանից բեխաբար են:

Էտ հնարն էն ա, որ թե մեկը լսեր, կատարեր, լավ գլներ, հըմա լսող չըկա, ի՞նչ օքուդ: Հնարն էն ա, որ, եթե ֆայտոնի վրեն մե սաքան ջուր քցեն, ֆայտոնը կըպայթի, մե սաքան էլ լցեն տան վրեն, տունը կըպայթի:

—Բա վիշաբի դե՞մը ինչ բղի անեն:

—Վիշաբին էլ կըսպանեն, թե չըվախենան: Հըմա ջիդո՞ւմ ես՝ ինչ կա, քույրի՛կ, —ասավ երկնքի աստղը: —Էս բանը ով որ լսա, հուրիչին ասա՛, հինքը քար կըդառնա: Էս բանը հուրիչին պատմել չի կարելի: Տղեն բոլորը լսաց: Աստղները խոսքը վերջացրին, մեկը բանցրցավ երգիները, մեկն էլ մտավ ծովը: Տղեն էլ գնաց, արխային քնավ:

Հառավոտ էլան վեր, ճաշը պաղրաստ էր, ձիանքն էլ կուրմիտ արուկ: Ոսաց ճերան, հելան ձիանքը խեճան, ճամբեն շարունակին:

Տղեն բան չըխոսաց, ո՞նց ասեր, քար դըղաններ:

Մե քանի օր ճամբա էթալուց ետո խասան Արևմտյան թաքավորի խողը: Տղեն հանեչ մարթ հղրկեց, խորն «ըչկի լուս» ասեն, մուշտուլուղ տանեն, որ «տղետ էկավ, Արևմտյան թաքավորի ախճիկ Զեյրանին էլ հիրանը կնիկ ա բերը»: Ոսաբարը տարան թաքավորին: Թաքավորը ուրխցավ, որ Զեյրանն հիրա ոտով ա գալուս:

Կանչեց պալատի գլխավոր ինջիններին ու ասավ. —Մե էնենց ֆայտոն կըպաղրաստես, որ նստողը հըմա ոտը դնա, ֆայտոնը պայթա: Մե խատ էլ էնենց տուն կըպաղրաստես, որ ներս մտնելու հրոպեին հըմա ոտը դնեն, չեմը չենքեն, տունը պայթա:

Ինջինները գնաց պաղրաստելու: Թաքավորն անհամփեր սպասում էր, որ Զեյրանը գա: Ըստոնք էկան:

Թաքավորը ֆայտոնը բերեց տղի հառեչը, ասավ. —Տղա՛ ջան, նստի ֆայտոնը, էս ֆայտոնը քո խըմար ա էս տեսակ գառթըվուկ: Տղեն ուզեց նստի ֆայտոնը, հընգերը թևից քաշեց.

—Մի՛ նստի, —ասավ, —ասա՛, մե սաքան ջուր բերեն, խմենք, ետո կընստես:

Մե սաքան ջուր բերին, տղեն հիշկաց ջրին, ասավ՝ թամուզ չի, ջուրը թափեց ֆայտոնի վրեն:

Ֆայտոնը պայթավ: Ոտով գացին:

Թաքավորը տղին նշանց տվեց ինջինների պաղրաստուկ տունը: Որ խասան դռան մոտը, էս դհուլչին էլի չըթողեց հընգերը ներս մտնի, ասավ.

—Ծարավ մեռա, ասա՛, թո մե սաքան ջուր բերեն:

Ջուր բերին, էս տղեն էլի չըխմավ, ասավ. —Ձեր ջուրը հընչի՞յա էսքան վատ, —ու թափեց սրախը:

Որ ջուրը թափեց սրախը, տունը պայթավ:

Թաքավորը հրամայեց ձի բերողին, ֆայտոն շինողին, ինջիններին սպանեն, որ էտ տեսակ խառգախ բան են արե, ուզեցեր են տղին սպանեն:

Դե, միամիտ ժողովուրթն ինչի՞ց ա խաբար:

Տղին տարավ պալատի էն օթաղը, որ վիրի հարգը վիշաբ կա: Հընգերին էլ ուզին տանեն մեկէլ օթաղը:

Հընգերն ասավ.—Ես ուրիշ օթաղ չեմ էթա, բըղի քնեմ թաքավորի տղի հօթաղը:

Ըստոնցը տարան մե հօթաղ, խառաներին էլ տարան հուրիշ հօթաղ: Գիչերվա մե վախտին վիշաբը սողալով էկավ: Տղեն թուրը ձեռին կայնուկ էր թաքավորի տղի գլխի վիրեր: Վիշաբը որ ծակից հիշկաց, տեսավ տղեն քնուկ չի, վախից ետ դառցավ, հըմա թաքավորի տղեն քնից գառթնավ ու տեսավ հիրա հընգերը թուրը քաշե, կայներ ա գլխի վիրեր:

—Այ մուխաննաթ,—ասավ թաքավորի տղեն,—հընչե՞ս ընձի սպանում, ի՞նչ վատութուն եմ արե:

Հընգերն ասավ.—Թաքավորի՛ տղա, վատութուն չես արե, բայց պատմել չեմ կանա, իրավունք չունեմ պաճառը չեզի ասեմ:

Էս տղեն կայնավ, թե.—Բըղի ասես, որ չես ասում, ուրեմ ուզում իր ընձի սպանիր:

Էս տղեն տեսում ա, որ հնար չըկա, պատմում ա, քար ա դառնում: Թաքավորի տղեն մնում ա չիվար: Նստուկ էր քարցած հընգերի ոտերի մոտ, լայնում էր, մեկ էլ տեսավ վիշաբը գլխը կախեց: Թուրը վերցուց ու տվեց վիշաբի գլխը թոցուց:

Գնաց, հիրան կնգան ու հընգերի կնգան կանչեց բերեց, իրեքով նստան, տղեն պատմեց բոլորը:

Էտ ժամանակ թաքավորի տղի կնիկն ասավ.—Որ էտենց ա, էն տունը, որ մացինք բոլոր գախտնիքն ընդե յա: Գնա՛ էն տունը, քչեր մա՛ց, գուցե էն աստղները ասեն ի՞նչ հնարքով էս քարցուց մարթին նորից դարցնենք իսկական մարթ, էս կախարթութունը իմալ վերացնենք:

Տղեն խեճավ ձինը ու գնաց: Գնաց խասավ էտ ծովի կրաղի տունը: Տեսավ մե մսուրք ա, մե աթոռ, մե սաքան, մե տալերք, մե ճաշ, մե տեղաչոր: Զինը կապեց թավլեն, գնաց օթաղը խաց ճերավ, նստավ դինջցավ, հելավ մե տալդա տեղ կայնավ: Գիչերվա մե վախտին մեկ էլ տեսավ՝ մե աստղ երգնքից հիչավ, մե աստղ էլ ծովից դուս էկավ, էկան ծովի կրաղը, խոսացին:

Երգնքի աստղը ասավ.—Հէսօր ո՞վ ա ղոնաղտ:

—Խին ծանոթ ա,—ասավ ծովի աստղը,—էն չորսը ձիավորներից մեկն ա, որ դու ասեցիր. «Գլխներին փորցանք կըզա»։ Փորցանքից ազատվեր են, հըմա մե տղեն մեր խոսածը լսեր ա, քարցեր ա։

—Տենաս էտ տղին սախծնելու հնար չըկա՞։

—Կա,—ասավ երգնքի աստղը,—հըմա շատ դժվար ա, ամեն մարթ չի կանա կատարա։

Թե մեզի հէսօր էլ լսող կա, թո լավ լսա, էն տղեն ափսոս ա մնա քար։ Հընգերը, որ էթա, հիրա տղին մորթա քարըցածի գլխի վրեն, տղի արունը քարի գլխից հիչնի չանքի ոտները, քարը նորից մարթ կըղառնա, տղեն կըփրգվի։

Թաքավորի տղեն հըմմեն լսաց։ Տեսավ աստղները գացին մեկը երգիրը, մեկն էլ մտավ ծովը։

Հինքն էլ գնաց արխային քնավ։

Առավոտը վեր կացավ, խաց ձերավ, խեձավ ձինը հընգավ ճամբա։ Էկավ, կնգան մանդրամաս պատմեց, ինչ հինքը լսեր էր։

Կնիկն ասավ.—էտ տեսակ հընգերի խըմար մե տղա չի, որ տասսը տղա էլ հըլներ, կըմորթի, գնա տղին բե'ր, մորթա'։

Խոր ըչկերից արսունքը թափավ, ձեռները դողացին։

Կնիկն ասավ.—Լա'վ, դու կայնի', ես կըմորթեմ։

Տղեն քնուկ էր, մերը գնաց, տղին բերեց, աթոռը տրեց ոտների տակը, բանցըրցավ, տղին դրեց քարըցուկի գլխի վրեն ու վիզը կղրեց։

Արունը գլուկ-գլուկ հիչավ ցածր։ Մերը տղին տարավ, դրեց տեղի մեջը, էկավ, կայնավ քարըցուկի կողը։ Արունը որ խասավ ոտների տակը, տղեն սկսեց կենթանանալ։

Չէր հընցե խինգ հրուպե, տղեն խոսաց, ասավ.—Վա՛հ, էս ինչ քուն էր էկավ վրես, թմբրա։

Ետո միտն էկավ, որ պատմեց ու քարըցավ։ Որ հիմացավ, թե թաքավորի տղեն գացեր ա ծովի կրաղի տունը, հիմացեր ա դեղը, էկեր ա տղին մորթեր ա, շատ նեղացավ, նիւթթը կախեց, որ հիրա պաճառով անմեղ էրեխին մորթեր են։

Գնաց, որ տղին տենա։ Ընդոնք էլ հետեւից գացին, տեսան տղեն զարթնեց ա, օրըրոցի փետից կախուկ ճանների խետ ա խաղում։

Որ էս տեսան, շատ ուրխցան։

Թաքավորի տղեն խորը գահից զրկեց, հինքը դառցավ թաքավոր, հընգերին էլ մեծ պատվով հղրկեց Հյուսիսային երգիրը։ Ընդոնք խասան հիրանց մուրազին, թո ամմեն մարթ հիրա մուրազին խասնի։